



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 22/21

03.10.2021թ.

ք. Երևան

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը, նախագահությամբ դատավոր Կարինե Բաղդասարյանի (այսուհետ՝ Դիմող), թիվ ՎԴ/10366/05/19 վարչական գործի շրջանակներում դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 26-րդ գլխի կարգավորումների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածներին, այնքանով, որքանով հնարավորություն չի նախատեսվում Օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված դատավարական նորմերի կիրառմամբ քննության առարկա դարձնել նորմատիվ իրավական ակտի (կամ դրա դրույթի) իրավաչափության հարցը՝ դրա ընդունման համար հիմք հանդիսացած ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցած, սակայն ուժը կորցրած (գործողությունը դադարած) նորմատիվ իրավական ակտին (կամ դրա դրույթին) համապատասխանության տեսանկյունից:

Ըստ Դիմողի՝ ստեղծված այն իրավիճակը, երբ գործող օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան անհնարին են դարձնում ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա առանձին նորմատիվ իրավական ակտերին համապատասխանության հարցը ստուգելու նպատակով վարչական արդարադատության իրականացումը, անհամատեղելի է իրավական պետության կողմից որդեգրված սկզբունքներին և մոտեցումներին:

Անհրաժեշտ է հաշվի առնել այն իրողությունը, որ ինչպես նախկինում գործող «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի կարգավորումները չեն բացառել, այնպես էլ

ներկայումս գործող «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի կարգավորումները չեն բացառում ՀՀ իրավական համակարգում կոնկրետ իրավիճակում ի հայտ եկած հարցի լուծման համար տվյալ ոլորտը կարգավորող այն նորմատիվ իրավական ակտի կիրառումը, որն արդեն իսկ ուժը կորցրած է (որի գործողությունը դադարած է):

Տվյալ դեպքում խնդրահարույց իրավիճակը կապված է վիճարկվող նորմատիվ իրավական ակտի իրավաչափությունը՝ դրա նկատմամբ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցած, սակայն ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտի համեմատ Օրենսգրքի 26-րդ գլխի կանոններով ստուգելու և դրա արդյունքում համապատասխան դատական ակտ կայացնելու հնարավորության բացակայության հետ՝ պայմանավորված պատշաճ դատավարական կառուցակարգերի և ընթացակարգերի բացակայությամբ:

Ընդ որում, նկարագրված խնդրահարույց դեպքերում դիմում ներկայացնելը և այն դատարանի կողմից վարույթ ընդունելը դեռևս բավարար չէ, որպեսզի ապահովված համարվի անձանց դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացումը՝ օրենսգրքով նախատեսված նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի հատուկ վարույթի շրջանակներում, քանի որ նման դեպքերում դատարանը միևնույնն է հնարավորություն չի ունենալու իրականացնել գործի պատշաճ քննություն և համապատասխան լիազորությունների կիրառման միջոցով կայացնելու գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ պատշաճ դատավարական կառուցակարգերի և ընթացակարգերի բացակայությամբ:

Մինչդեռ հատկապես դավարական օրենսդրությունը կարգավորելիս օրենսդիրը պետք է առաջնորդվի այն տրամաբանությամբ, որ յուրաքանչյուր դատավարական օրենսգրքով հստակ կարգավորված լինեն թե՛ ընդհանուր կարգով քննվող գործերի, թե՛ հատուկ վարույթի կարգով քննվող առանձին գործերի հարուցման, նախապատրաստման, դրանց քննության և լուծման համար պատշաճ ընթացակարգեր, որպեսզի տվյալ դատավարության շրջանակներում դատական պաշտպանություն հայցող անձին հնարավոր լինի ընձեռել դատարան դիմելու հստակ և մատչելի իրավունք:

Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 26-րդ գլխի թերի իրավակարգավորման արդյունքում անհամաչափորեն և չարդարացված սահմանափակվում է արդյունավետ դատական պաշտպանության, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքի

բաղադրադարձը հանդիսացող՝ դատարանի մատչելիության, դատական պաշտպանության դիմելու իրավունքը, քանի որ անձի նկատմամբ նորմատիվ իրավական ակտի կիրառման արդյունքում դատարան դիմելիս չի ապահովվում վիճարկվող նորմատիվ իրավական ակտի՝ դրա ընդունման համար հիմք հանդիսացած ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցած, սակայն ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտին համապատասխանելու հարցը Օրենսգրքի 26-րդ գլխի կանոններով պատշաճ քննության առարկա դարձնելու և դրա արդյունքում նույն գլխի կանոնների կիրառմամբ գործն ըստ էության լուծող համապատասխան դատական ակտ կայացնելու հնարավորություն. հետևաբար, Օրենսգրքի 26-րդ գլխի կարգավորումները այնքանով, որքանով հնարավորություն չեն նախատեսում նույն գլխի կանոններով պատշաճ սահմանված դատավարական նորմերի կիրառմամբ քննության առարկա դարձնել նորմատիվ իրավական ակտի (կամ դրա դրույթի) իրավաչափության հարցը՝ դրա ընդունման համար հիմք հանդիսացած ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցած, սակայն ուժը կորցրած նորմատիվ իրավական (կամ դրա դրույթին) համապատասխանության տեսանկյունից, հակասում են ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 26-րդ գլխի կարգավորումների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածներին, այնքանով, որքանով հնարավորություն չի նախատեսվում Օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված դատավարական նորմերի կիրառմամբ քննության առարկա դարձնել նորմատիվ իրավական ակտի (կամ դրա դրույթի) իրավաչափության հարցը՝ դրա ընդունման համար հիմք հանդիսացած ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցած, սակայն ուժը կորցրած (գործողությունը դադարած) նորմատիվ իրավական ակտին (կամ դրա դրույթին) համապատասխանության տեսանկյունից:

Օրենսգրքի վիճարկվող 26-րդ գլուխը վերաբերում է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթին:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Ըստ Օրենսգրքի վերը նշված գլխի՝ վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ հետևյալ գործերը. Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի նորմատիվ իրավական ակտերի, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև համայնքի ավագանու ու համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:

Օրենսգրքի 26-րդ գլխի 198-րդ հոդվածը կարգավորում է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատական ակտ կայացնելու առանձնահատկությունները և սահմանում է հետևալը.

1. Այն դեպքում, երբ վիճարկվում է որևէ նորմատիվ իրավական ակտի համապատասխանությունը դիմումում նշված ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին, ապա վարչական դատարանը դատական ակտ կայացնելիս պարզում է վիճարկվող ակտի համապատասխանությունը նաև դիմումում չնշված այլ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին, եթե դա վերապահված չէ սահմանադրական դատարանի իրավասությանը:

2. Պարզելով վիճարկվող ակտի անհամապատասխանությունը դիմումում չնշված ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին՝ վարչական

դատարանը վիճարկվող ակտն անվավեր է ճանաչում նաև այդ հիմքով՝ անկախ հայցվորի պահանջից:

3. Սույն գլխով նախատեսված գործերով դատական ակտ կայացնելիս վարչական դատարանը պարզում է վիճարկվող ակտի (վիճարկվող դրույթի) իրավաչափությունը, մասնավորապես հաշվի առնելով՝

1) իրավական ակտի պահանջվող տեսակը.

2) իրավական ակտն ընդունելու և գործողության մեջ դնելու՝ օրենքներով նախատեսված կարգի պահպանվածությունը.

3) մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման և պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը.

4) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները:

4. Նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի իրավաչափությունը պարզելիս վարչական դատարանը պարզում է նաև այդ դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված տվյալ նորմատիվ իրավական ակտի այլ դրույթների իրավաչափությունը և, գալով եզրահանգման դրանց անվավերության վերաբերյալ, իրավասու է նաև այդ դրույթները ճանաչելու անվավեր:

5. Եթե ոչ իրավաչափ նորմատիվ իրավական ակտն ուժը կորցրել է մինչև վարչական դատարանի կողմից այդ գործով ըստ էության դատական ակտ կայացվելը, ապա վարչական դատարանը ճանաչում է դիմելու պահին դրա ոչ իրավաչափ եղած լինելը, եթե այդ ակտը կիրառվել է դիմողի նկատմամբ: Հակառակ դեպքում գործի վարույթը կարճվում է սույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով:

Օրենսգրքի 26-րդ գլխի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ նույն գլխի 192-րդ հոդվածում նշված՝ Օրենսգրքի 191-րդ հոդվածի հիմքով վարչական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտներին իրավունք է վերապահված դիմում ներկայացնելու վարչական դատարան Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի նորմատիվ իրավական ակտերի, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև համայնքի ավագանու ու համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող

նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ հարցերով, սակայն նույն 198-րդ հոդվածով նորմատիվ իրավական ակտի կիրառման արդյունքում դատարան դիմելիս չի ապահովվում վիճարկվող նորմատիվ իրավական ակտի՝ դրա ընդունման համար հիմք հանդիսացած ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցած, սակայն ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտին համապատասխանելու հարցը Օրենսգրքի 26-րդ գլխի կանոններով պատշաճ քննության առարկա դարձնելու և դրա արդյունքում նույն գլխի կանոնների կիրառմամբ գործն ըստ էության լուծող համապատասխան դատական ակտ կայացնելու հնարավորություն:

Այսինքն՝ սույն պարագայում վիճարկվում է օրենսդրական բաց, այն է նորմատիվ իրավական ակտի կիրառման արդյունքում դատարան դիմելիս վիճարկվող նորմատիվ իրավական ակտի՝ դրա ընդունման համար հիմք հանդիսացած ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցած, սակայն ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտին համապատասխանելու հարցը Օրենսգրքի 26-րդ գլխի կանոններով պատշաճ քննության առարկա դարձնելու և դրա արդյունքում նույն գլխի կանոնների կիրառմամբ գործն ըստ էության լուծող համապատասխան դատական ակտ կայացնելու համապատասխան ընթացակարգերի և մեխանիզմների բացակայությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված դիմումով վիճարկվում է օրենսդրական բացի սահմանադրականության հարց, ուստի, հարկ ենք համարում անդրադառնալ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից նշված հարցի վերաբերյալ կայացված որոշումներին:

Այսպես, 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՄԴՈ-914 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է՝ «7. Օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՞ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը: Սահմանադրական դատարանն իր՝ 2010 թ. փետրվարի 5-ի ՄԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր

մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է «Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»: Ջարգացնելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը»:

2014 թվականի ապրիլի 8-ի ՍԴՈ-1143 որոշման մեջ ՀՀ Սահմանադրական դատարանը փաստում է, որ «օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը»:

Սահմանադրությամբ 61-րդ և 63-րդ հոդվածներով երաշխավորված է արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը անկախ և անաչառ դատարանի կողմից: Այսինքն՝ Սահմանադրությամբ նախատեսված է դատարանի անկախ և անաչառ լինելու սահմանադրական երաշխիքը: Անկախ և անաչառ դատարանի կողմից գործի քննության

պայմանը, որպես արդար դատաքննության իրավունքի առանցք, նախատեսված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 6-րդ հոդվածով:

Սահմանադրության 61-րդ հոդվածի և 63-րդ հոդվածի սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում: Նշված որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ Սարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման մեջ նշել է. «6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող

հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1–ին մաս): Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսինքն՝ անձը, դիմելով դատարան, պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեզիտիմ ակնկալիքով:

Անդրադառնալով նաև պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքին՝ Սահմանադրական դատարանը ՄԴՈ-1119 որոշման մեջ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «5. Սահմանադրության 18-րդ հոդվածը յուրաքանչյուրին տալիս է, մասնավորապես, պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, որին ուղղակիորեն համապատասխանում է պետության պարտականությունն ինչպես օրենսդրական մակարդակում ամրագրել, այնպես էլ իրավակիրառական պրակտիկայում ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների առկայությունը: Այսինքն՝ օրենսդրական մակարդակում չպետք է սահմանվեն այնպիսի իրավական կառուցակարգեր, որոնք առաջին հայացքից հանդես են գալիս որպես երաշխիքներ տվյալ իրավական կառուցակարգի իրացման համար, սակայն կարգավորումների մանրամասներում փաստացիորեն իմաստազրկում են կամ սահմանափակում այդ իրավական կառուցակարգերը:»:

Ստացվում է, որ գործող կարգավորմամբ անձին իրավունք է վերապահված դիմելու վարչական դատարան՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի նորմատիվ իրավական ակտերի, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև համայնքի ավագանու ու համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ հարցերով: Սակայն, ՀՀ իրավական համակարգում, որպես կանոն, օրինակ՝ ՀՀ կառավարության որոշումները կամ այլ մարմինների կողմից ընդունված իրավական ակտերը բխում են որևէ այլ իրավական ակտի պահանջից, այսինքն՝ գտնվում են պատճառահետևանքային կապի մեջ: Դեպքերը բազմաթիվ են, երբ հիմնական (ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող) իրավական ակտը ճանաչվում է ուժը կորցրած, սակայն դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերը շարունակում են գործել: Նման դեպքերում անձը պետք է իրավունք ունենա վիճարկելու գործող իրավական ակտի համապատասխանությունը վիճարկման պահին ուժը կորցրած, սակայն վիճարկվող իրավական ակտի հիմք հանդիսացած և ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտը: Դա բխում է իրավական պետության

սկզբունքներից, անձի՝ արդար դատաքննության և դատական պաշտպանության՝ սահմանադրորեն երաշխավորված իրավունքներից:

Ներկայիս օրենսդրական կարգավորման արդյունքում ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ անձը, մի կողմից, ունի Սահմանադրությամբ երաշխավորված անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության իրավունք, մյուս կողմից, դատարանին վերապահված չեն օրինական և հիմնավոր դատական ակտ կայացնելու համար անհրաժեշտ համապատասխան ընթացակարգեր և մեխանիզմներ: Արդյունքում, տվյալ դեպքերում, անձի՝ դատական պաշտպանության իրավունքը վերածվում է ձևական և հռչակագրային բնույթ կրող իրավունքի:

Օրենսդրական նման կարգավորումը, կարծում ենք, չի բխում ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների պահանջներից: Այն ըստ էության շրջանցում է անձի սահմանադրորեն երաշխավորված դատական պաշտպանության և անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության իրավունքները, դատարան դիմելու լեգիտիմ ակնկալիքը, լիարժեք դատական պաշտպանության հնարավորությունը, մյուս կողմից ոչ արդարացի սահմանափակելով նաև դատարանների իրավասությունների շրջանակը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի կարգավորումների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածներին, այնքանով, որքանով հնարավորություն չի նախատեսվում Օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված դատավարական նորմերի կիրառմամբ քննության առարկա դարձնել նորմատիվ իրավական ակտի (կամ դրա դրույթի) իրավաչափության հարցը՝ դրա ընդունման համար հիմք հանդիսացած ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցած, սակայն ուժը կորցրած (գործողությունը դադարած) նորմատիվ իրավական ակտին (կամ դրա դրույթին) համապատասխանության տեսանկյունից, խնդրահարույց է:

 Recoverable Signature

Համակարգող՝

X Lyudvik Davtyan

Լյուդվիկ Դավթյան

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169